Ապահով համացանց

Պատրաստեց՝ Արմավիրի մարզի Լեռնագոգի Օ. Փակումեանի անվան միջն. դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչուհի Ալիսա Առաքելյանը

ծնողական ժողովի սցենարը

Դասասենյակը որտեղ տեղի ունեցավ միջոցառումը նախօրոք ձևավորված էր:

Դասասենյակի կենտրոնուում դրված էր մեծ, կլոր սեղան: Նրա կենտրոնում գլոբուսն էր միացված բազմաթիվ մկնիկների: Սեղանի եզրերին դրված գունավոր թղթերի վրա գրված էին հայկական առածներ: Իսկ գլոբուսից դեպի սեղանի եզրերը ճառագայթների նման տարածվում էին գուավոր փոքրիկ թղթերի վրա գրված օգտակար հղումները : Դասասենյակի աջ կողմում համակարգիչն է, միացած տեսացրիչին և համացանցին:

Միջոցառումը սկսվում է ուսուցչի ողջույնի խոսքով: Նա իր խոսքն է ուղղում ծնողներին և ներկայացնում միջոցառման թեման և նպատակը.

-Բարև ձեզ, հարգելի ծնողներ: Մեր հանդիպման թեման է՝»Ապահով համացանց», իսկ

նպատակն է գիտելիքների ձեռքբերումը , որոնք թույլ կտան ապահովել երեխաների կողմից համացանցի անվտանգ օգտագործումը: Ներկայումս ժամանակակից մարդու առօրյա կյանքը ՝ իր բազմազան խնդիրներով, անհնար է պատկերացնել առանց համացանցի: Եվ ինչքան համացանցն անսահմանափակ լայն ճանաչողական հնարավորություններ է տալիս, այդքան էլ ունի վտանգներ հատկապես երեխաների համար: Գաղտնիք չէ, որ համակարգչի հետ շփումը, հատկապես խաղային ծրագրերով, ուղեկցվում է ուժեղ նյարդային լարվածությամբ, յուրահատուկ հուզական սթրես առաջացնելով երեխայի մոտ: Կարևոր է հետևել , թէ ինչ բնույթի խաղերով են զբաղվում երեխաները: Նրանց պետք է հետ պահել դաժան, չար, ոչ գեղագիտական խաղերից: Միաժամանակ ուշադրություն դարձնել այն կայքերին, որոնք երեխաները հաճախում են համացանցում:

Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է շնորհանդեսը:

-Աշխարհում տեղի ունեցող փոխությունները մեր օրերում մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ: Հասարակության լիարժեք անդամ ձևավորելու համար անհրաժեշտ է ներկայացվող բարձր պահանջներին համապատասխան կրթական մակարդակ: Ինչ խոսք կրթության բարելավման գործում իր կարևոր դեր ունի նաև համացանցը: Խոսենք համացանցի որոշակի բնութագրերի մասին.

- Համացանցը տեղեկատվական միջոց է իր ճանաչողական լայն հնարավորություններով: Ժամանակակից աշխարհը դժվար է պատկերացնել առանց ինֆորմացիայի փոխանցման այդպիսի գերհզոր միջոցի:
- Ոմանց համար այն ինքնազարգացման աղբյուր է, այլոց համար զվարճանքի միջոց, մի մասի համար էլ՝ վաստակի աղբյուր:
- Համացանցը հնարավորություն է տալիս վայրկյանների ընթացքում ինֆորմացիան հասցնել երկրագնդի ցանկացած կետ:
- Համացանցը նաև բազմատեսակ ինֆորմացիայի կուտակման, պահպանման և փոխանցման ներկայիս ամենահզոր միջոցներց մեկն է, որտեղ ցանկացած բնագավառի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել:
- -Իսկ այժմ տեսնենք , թե ինչպիսի վիճակագրական տվյալներ կան աշխարհում, Հայաստանում և, ինչու ոչ, մեր դպրոցում համացանցի օգտագործման վերաբերյալ: Աշխարհի բնակչության մոտ 30 տոկոսը՝ ավելի քան 2.1 մլրդ մարդ միացել է համացանցին: Հայաստանի բնակչության արդեն կեսից ավելին ՝ 1,7 մլն մարդ է միացել, որից 600 հազարը՝ սոցիալական ցանցերին : Մեր դպրոցում I- XII դասարաններում սովորում են 228 աշակերտ: Սոցոլոգիական հարցումներից պարզվեց , որ յուրաքանչյուր դասարանում համացանցից օգտվում են սովորողների 60- 70 տոկոսը:

Ուսուցիչը շարունակում է իր խոսքը.

Սակայն, ինչպես արդեն նշեցի, համացանցն ունի նաև վտանգներ ՝ առավելապես ամենախոցելի խավի՝երեխաների համար; Ներկայացնեմ Ձեզ փոքրիկ տեսահոլովակ այդ վտանգների մասին:

ՄԱԿ-ի տվյալներով համացանցում մոտ 800 հազար մանկապիղծ է վխտում:

Իսկ համացանցի օգտագործման տրաֆիկի մեծ մասը ոչ պատշաճ բովանդակության է:

Ուսուցիչն ընդհատում է շնորհանդեսի ցուցադրումը հետևյալ տեսահոլովակով.
http://www.youtube.com/watch?v=eMSlq1YWyno :

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես կարելի է դարձնել մեր աշխատանքը համացանցում ապահով և անվտանգ: Ահա մի շարք խորհուրդներ, որոնք դուք կարող եք տալ երեխաներին, որպեսզի նրանք ավելի ապահով օգտվեն համացանցից .

Ուսուցիչն շարունակում է շնորհանդեսի ցուցադրումը

- Քաջալերեք ձեր երեխաներին, որպեսզի կիսեն իրենց ինտերնետային փորձառությունը ձեզ հետ: Վայելեք ինտերնետը ձեր երեխաների հետ:
- Սովորեցրեք ձեր երեխաներին վստահել իրենց ներքին զգացողությանը: Եթե որևէ բան նրանց նյարդայնացնում է ցանցում, հարկ է որ նրանք ասեն ձեզ այդ մասին:
- Անձի հաստատում պահանջող կայքեր (չատ, տեսախաղեր և այլն) մտնելիս, օգնեք երեխաներին ընտրել այնպիսի անուն, որ չբացահայտվի անձնական տեղեկատվությունը՝ ձեր հասցեն, հեռախոսի համարը կամ այլ անձնական տեղեկություն:
- Սովորեցրեք ձեր երեխաներին, որ ճշտի և սխալի միջև եղած տարբերությունը ինտերնետում նույնն է, ինչպես իրական կյանքում:
- Սովորեցրեք ձեր երեխաներին, որ ճիշտ չէ այն ամենը, ինչ որ կարդում կամ տեսնում են ցանցում: Քաջալերեք նրանց հարցնել ձեզ, եթե համոզված չեն:

- Բացի ընտանիքի անդամներից ոչ մեկին չի կարելի վստահել ցանց մուտք գործելու իրենց նշանաբանը. Դա հետագայում կարող է տհաճությունների կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:
- Բացատրեք, որ չի կարելի բացել այն էլեկտրոնային նամակը, ֆայլը կամ web էջը, որը ստացել եք անհայտ կամ վստահություն չներշնչող անձից:
- Ասեք ձեր երեխային, որ համացանցում ծանոթացած նորահայտ անձի հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, բայց եթե, այնուամենայնիվ, որոշել է հանդիպել նրան, ապա գնացեք նրա հետ:
- Բացատրեք, որ ինտերնետային ընկերները հնարավոր է չլինեն այնպիսին ինչպիսին ներկայանում են ցանցում:
- Բացատրեք երեխաներին, որ էլեկտրոնային փոստով հաղորդակցվելիս պետք է արժանավայել դրսևորեն իրենց, չմոռանան, որ էլեկտրոնային փոստի միջոցով նրանք, ի վերջո, շփվում են մարդու հետ: Հաղորդակցման բոլոր ձևերի նման՝ էլեկտրոնային փոստը ևս ունի էթիկայի կանոններ և ավանդույթներ:
- Պարբերաբար հակավիրուսային ծրագրերի օգնությամբ ստուգեք համակարգչի աշխատունակությունը:
- Հակավիրուսային ծրագրերը պարբերաբար թարմացրեք կամ փոխարինեք նոր տարբերակով. լայնորեն կիռարվող հակավիրուսային ծրագրեր են Kaspersky, Dr. Web 7, Security, Comodo, Avira , Avast փաթեթները:
- Վերահսկեք ձեր երեխաների ցանցային գործունեությանը ինտերնետային առաջավոր տեխնոլոգիայով:
- Ծնողական վերահսկողությունները կարող են օգնել ձեզ գտելու վնասակար բովանդակությունը, հետևելու այն կայքերը, որոնք երեխան այցելում է և պարզելու, թե այդ պահին ինչ է նա անում այդտեղ:
- Մշտապես պահպանենք Համացանցային անվտանգության կանոնները: Այսօրվա համացանցը կարգավորվող միջավայր է և այնտեղ իրենց լավ են զգում միայն այն մարդիկ , ովքեր կարողանում են ճիշտ օգտագործել գործիքներն ու միջոցները:

Ուսուցիչը ավարտելով շնորհանդեսի ցուցադրումը, վերցնում է սեղանին դրված գունավոր թղթերի վրա տպագրված հղումներն ու առակները և բաժանում ծնողներին, խնդրում մեկնաբանել դրանք՝ զուգահեռ առաջարկելով իր մեկնաբանությունները.

Ամեն բարև տվող բարեկամ չէ:

Ինչ որ ցանես այն կհնձես:

Բաց ամանը շունն էլ կլիզի, կատուն էլ:

Փորձված թանը անփորձ մածունից լավ է:

Քաղցր լեզուն օձին բնից կհանի:

Յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր:

Բերնե-բերան, հազար բերան, ասեղը կդառնա գերան:

Եթե տասը բան գիտես, մեկն ասիր, ինը պահիր:

Դուռդ փակ պահիր , հարևանիդ գող մի հանիր:

✓ Հնարավորինս փակ պահեք ձեր անձնական տվյալները, եթե որոշել եք դրանք հրապարակել: Օգտագործեք ծածկագրեր, որպեսզի միայն ձեր ընկերները կարողանան կարդալ: Ձեր ծածկագրերը պահեք ապահով:

✓ Մեկնաբանություն գրելուց առաջ 2 անգամ մտածեք, քանի որ երբ այն հայտնվեց Համացանցում, այն կարող է հավերժ մնալ այնտեղ:
Մի վստահեք այն ամենին ինչ ասում են Ձեզ այլ մարդիկ, նրանք կարող են կեղծ լուսանկարներ օգտագործել կամ ստել:

✓ Ուշադիր եղեք թե ում հետ եք շփվում, հատկապես երբ ձեր ընկերների ցանկում ընդգրկում եք նոր մարդու:Եվ ուշադիր եղեք անծանոթ մարդկանց նկատմամբ, ովքեր Ձեզ հրավիրում են միանալ իրենց: Պարզեք, թե ի՞նչ են ուրիշները տեղադրում ցանցում Ձեր մասին եւ զգուշացրեք նրանց, եթե համաձայն չեք:

Քննարկումից հետո ուսուցիչը գործնական դասընթաց է իրականացնում՝ համակարգչում «Ծնողական վերահսկում» ծրագրի գործածության վերաբերյալ՝ համակարգչով , քայլ առ քայլ ցույց տալով, թե ինպես է աշխատում ծրագիրը, ինչպես կարելի է նրա օգնությամբ իրականացնել ժամանակի, որոշակի կայքերի սահմանափակում: Ծնողներն իրենք են փորձում աշխատել համակարգչի շուրջ և փոփոխել ծրագրի պարամետրերը !!!! Գործնական դասընթացի ավարտից և հարցերի քննարկումից հետո ուսուցիչը հրաժեշտի խոսքով դիմում է ծնողներին.

-Մեր հանդիպումն ավարտվեց, շնորհակալություն մասնակցության համար , վստահ եմ, որ այսօր ստացած գիտելիքները թույլ կտան Ձեզ ստեղծել համացանցում ապահով տարածք Ձեր երեխաների համար: